բացել է հաղորդալարերի ծայրերը 6 կամ 9 անգամ մաքրելու անհրաժեշտությունը, ինչպես այդ արվում էր անցյալում: Լրացուցիչ մեկուսիչ խողովակների արժեքը կազմել է 60 հազ. ռուբլի:

Այս երկու առաջարկությունները կարող են արմատավորվել Սովետական Միությունում թողարկվող միասնական սերիաների դրեթե բոլոր էլեկտրաշարժիչների արտադրության մեջ:

# ԴԵՏԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Երևանի և Տաշքենդի էլեկտրատեխնիկական գործարանների միջև ստեղծված սերտ համագործակցությունը խիստ դրական արդյունքներ է տալիս:

Տաշքենդցիներն իրենց բարեկամներին ուղարկել են պակետային փոխարկիչների կոնտակտային դանակի արտահատման դրոշմոցի նախագիծը, իսկ երևանցիները, իրենց հերթին, տաշքենդցիներին մատակարարել են ՊՎՋ—25 և ՊՊ—3 անջատիչների կափարիչների վռանի կողածալման դրոշմոցի գծագրեր:

Առաջ վռանները պատրաստվում էին մեխանիկական բարդ մշակումից հետո և եռակցվում էին կափարիչին:

Այդ վռանների պատրաստման նոր եղանակը, որն առաջարկել է տեխնիկական բաժնի ինժեներ Լ. Մատանյանը, 5—6 անգամ բարձրացրել է աշխատանքի արտադրողականությունը և, որ խիստ կարևոր է, բեռնաթափել է մեխանիկական ցեխն ու տարեկան կտա 45.000 ռուբլու պայմանական տնտեսում: 1 ա նկարում ցույց է տրված հին եղանակով, իսկ 1 բ նկարում՝ նոր եղանակով պատրաստվող վռանով կափարիչը:




Նկ. 1.
ա—կափարիչ՝ պատրաստման հին եղանակի վռանով, բ—կափարիչ՝ պատրաստման նոր եղանակի վռանով:

Գործիքային ցեխի փականագործ Կ. Բալթայանը պատրաստել է նոր դրոշմոց՝ գամերի համար կոնտակտային դանակի չորս անցքերը միաժամանակ արտահատելու նպատակով:

Առաջ այդ կատարում էին չորս օպերացիայից հետո, կոնդուկտորի օգնությամբ:

Կ. Բալթայանի առաջարկությունը 3 անգամ բարձրացնում է այդ օպերայիայի աշխատանքի արտադրողականությունը և տարեկան տալիս է 24 հազ. ռուբլու պայմանական տնտեսում: